



**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE**

Հայաստանի Հանրապետություն
Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Tigran Mets, 59, Vanadzor
Republic of Armenia
Tel. (հեռ) (0322) 4 22 68
E-mail hcav@hcav.am
E 1101

13 հունվարի, 2010թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հովսեփյանին

Հաղորդում

2010 թվականի հունվարի 10-ին մեր կազմակերպությունը՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, դիտորդական առաքելություն է իրականացրել թիվ 10 ընտրատեղամասում՝ մեծամասնական ընտրակարգով ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրությունների ժամանակ:

Դիտորդական առաքելության իրականացման ընթացքում մեր կազմակերպության դիտորդների կողմից արձանագրվել են որոշակի խախտումներ:

Մասնավորապես՝ թիվ 10/18 ընտրատեղամասում ընտրական հանձնաժողովի նախագահը դիտորդին չի թույլատրել ծանոթանալ ընտրական հանձնաժողովի փաստաթղթերին՝ գործավարության մատյան, ընտրողների գրանցամատյան ընտրողների թվի, հատկացված քվեաթերթիկների վերաբերյալ: Այս կապակցությամբ գրություն է ուղարկվել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, սակայն դրանից հետո էլ ո՛չ դիտորդին, ո՛չ ՋԼՄ ներկայացուցիչներին չի տրամադրվել տեղեկատվություն:

Թիվ 10/19 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը դիտորդին հնարավորություն չի տվել տեղեկություն ստանալ քվեարկությանը մասնակցած անձանց թվի վերաբերյալ:

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ ընտրությունների ժամանակ թույլ տրված ընտրական խախտումների համար սահմանվում է պատասխանատվություն: Մասնավորապես՝ 154⁵ հոդվածը պատասխանատվություն է սահմանում վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով թիվ 10/18, 10/19 ընտրատեղամասում մեր դիտորդի կողմից արձանագրված խախտումները՝ խնդրում են Ձեր լիազորությունների շրջանակում համապատասխան միջոցառումներ ձեռնարկել թիվ 10/18, 10/19 ընտրատեղամասային հանձնաժողովի նախագահներին պատասխանատվության ենթարկելու համար:

Հարգանքներով՝

կազմակերպության նախագահ,

Լուռու մարզի ՇՊԱԿ համակարգող՝

Արթուր Սաքունց